

- 75 ջառ մի որպէս փիլիսոս, յոյժ մեծագին գնով-
 դոր իւրեանց լեզուաւ «ալթէմպաս» կոչեն-
 կանգունն երեքհարիւր զուռուչ. սպիտակ
 իրրեւ զծիւն, դոր փայլէր որպէս հայելի. եւ
 ունէր խաչածեւ կոճակ մի եւ մէջն ակն մի
 80 զմբուխտ անդին. եւ զլուխն եղին թագ մի
 կամարածեւ երեքյարկեան, ազնիւ եւ ան-
 զլուաք. եւ ունէր մասն ոսկի մատանի ակմաս
 ակնով, որ վառէր իրրեւ զճրագ: Ապա սկսան
 դարտնալք, զկնի կպիսկոպոսք, ապա պօն-
 սինօրք շուրջատվորիլ. եւ կանգնեալ յոտին
 85 եղին զթագս ի զլուխս Փափին բոլորով: Եւ
 մերձ Փափին յաջ զիհն Սպանիու թագաւորին
 էլչին էր եւ ձախն Կայսեր. ապա զկնի սյլքն.
 զի ամենայն թագաւորք վէքիլ ունին մօտ Փա-
 90 փին, սիրոյ եւ հնազանդութեան սակի. եւ
 ամէն իրեք տարի փոխին, որպէս Ստամպոլ
 եւ ի Հալապ. եւ լուցեալ ջահս եւ լապտերս
 եւ սպիտակ մոմս եւ կերոն:

Եւ յորժամ աղօթէր Փափն կամ աւետա-
 95 րան կարգայր, ամենեքին երկիր պաղանէին:
 Եւ էր պօնսինօրաց թագն թաճն միափերթ եւ
 տափակ մին խաչիւ. եւ արքեպիսկոպոսացն
 բաց եւ տափակ երկու խաչիւ. իսկ զարտ-
 նալաց երկճղի եւ այլ պատվական: Եւ յոր-
 100 ժամ կացին աղօթս ընդ Փափին եւ բոլորեալ
 պար առնէին՝ բազմութիւն թաղից պաղպա-
 ջուն ահայուցանէր զտեսողս, զի նման էր ա-